Համագործակցության առաջարկ հաղորդակցության փորձագետի համար

❍ Կազմակերպության մասին

«Փոփոխություն» սոցիալ-առողջապահական հասարակական կազմակերպությունը («Փոփոխություն» ՀԿ) կնոջ եւ քվիր մարդու առողջության իրավունքի (շահա)-պաշտպանությամբ զբաղվող հարթակ է, որի նպատակն է փոխել Հայաստանում սոցիալ-առողջապահական համակարգը՝ մարդու իրավունքների վրա հիմնված քաղաքականությունների ու ծառայությունների զարգացման միջոցով:
«Փոփոխություն» ՀԿ մասին հավելյալ տեղեկատվություն հասանելի է կայքէջում՝ www.changengo.org

❍ Ծրագրի մասին

«Առողջության իրավունք. բովանդակություն բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի՝ ԵՄ ֆինանսավորմամբ ընթացող «Դիմակայուն քաղաքացիական հասարակություն Արեւելյան գործընկերության տարածաշրջանում» ծրագրի շրջանակում: Ծրագրի ենթադրամաշնորհները համաֆինանսավորվում են Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից:

Ծրագրի շրջանակներում «Փոփոխություն» ՀԿ-ն, ի թիվս այլ գործողությունների, մշակելու է հայալեզու մատչելի տեղեկատվություն առողջության իրավունքի մասին եւ տարածելու է դրանք սոցիալական հարթակների իր էջերով:

❍ Փորձագիտական աշխատանքի նկարագիրը

Հաղորդակցության փորձագետը սերտ համագործակցելով «Փոփոխություն» ՀԿ թիմի հետ՝ պետք է աջակցի առողջության իրավունքին վերաբերող թիրախային բովանդակության մշակման, փորձարկման եւ գնահատման ընթացքում՝ իրականացնելով հետեւյալ գործողությունները՝

- վերանայել «Փոփոխություն» ՀԿ հաղորդակցման եւ բովանդակության ստեղծման պլանը,
- գրավոր առաջարկներ ներկայացնել ստեղծվող բովանդակության (տեքստ, վիզուալ, վիդեո, աուդիո) վերաբերյալ,
- առաջարկների հիմքով՝ «Փոփոխություն» ՀԿ թիմի ստեղծված բովանդակությունը սոցիալական հարթակներում հրապարակվելուց հետո կատարել

գրավոր վերլուծություն՝ հիմնվելով դիտումների, ներգրավվածության եւ արձագանքների վրա,

- վերլուծության արդյունքների հիմքով, ըստ կարիքի, վերանայել, լրամշակել ու վերջնականացնել «Փոփոխություն» ՀԿ հաղորդակցման եւ բովանդակության ստեղծման պլանը,
- ներկայացնել վերլուծական ամփոփում:

❍ Աշխատանքի տեխնիկական նկարագիրը

Փորձագիտական աշխատանքը պետք է կատարվի 2025 թվականի հունիսի 20-ից մինչ հուլիսի 25-ը՝ առցանց եւ | կամ անցանց եղանակներով: Փորձագիտական աշխատանքի ընթացքում ստեղծված գրավոր նյութերն ու առաջարկները պետք է ներկայացվեն պահպանելով հետեւյալ պահանջները՝

- լեզուն՝ հայերեն կամ անգլերեն,
- տառատեսակը՝ Arial 12 կամ Tahoma 12,
- **առաջնային առաջարկների մշակման վերջնաժամկետը՝ 2025 թվականի հունիսի 30,**
- **վերջնական առաջարկների մշակման վերջնաժամկետը՝ 2025 թվականի հուլիսի 31:**

❍ Համագործակցության համար անհրաժեշտ պայմանները

Համագործակցության համար կարող են դիմել այն անձինք, ովքեր՝

- ☑ ունեն հաղորդակցության կամ սոցիալական քաղաքականության կամ հարակից ոլորտային կրթություն,
- ☑ ունեն մարդու իրավունքների հաղորդակցության կամ սոցիալական արդարության կամ սոցիալական փոփոխություններին առնչվող աշխատանքային փորձ,
- ☑ ունեն թվային բովանդակության ստեղծման եւ սոցիալական մեդիայի ռազմավարության մշակման փորձ,
- ☑ ունեն մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ խորքային իրազեկվածություն,
- ☑ հարգում են մարդու արժանապատվությունը, հիմնարար իրավունքները,
- ☑ գենդերազգայուն են,
- ☑ անհանդուրժող են խտրականության, սեքսիզմի, հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի ցանկացած դրսեւորման հանդեպ:

❍ Դիմելու կարգը

Հետաքրքրված փորձագետները մինչ 2025 թվականի հունիսի 10-ը, ժամը՝ 17:00-ն կարող են նամակ ուղարկել info@changengo.org էլփոստին՝ նամակի թեմայի տողում նշելով հաղորդակցության մասնագետ:

Նամակին կից անհրաժեշտ է ներկայացնել՝

- ⇨ տեղեկատվություն՝ դիմելու հետաքրքրության եւ փորձառության մասին,
- ⇨ ինքնակենսագրական,
- ⇨ գնային առաջարկ ՀՀ դրամով:

«Դիմակայուն քաղաքացիական հասարակությունը Արեւելյան գործընկերության տարածաշրջանում» ծրագիրն ազատված է ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), հետեւաբար բոլոր գործարքները կատարվելու են առանց ԱԱՀ-ի:

Դիմելիս հնարավոր հարմարեցումների կարիքի պարագայում խնդրում ենք կապ հաստատել «Փոփոխություն» ՀԿ թիմի հետ՝ զանգահարելով (+374) 95 095 505 հեռախոսահամարին կամ նամակ ուղարկելով էլփոստին՝ info@changengo.org

❍ Որոշումների կայացման գործընթացը

«Փոփոխություն» ՀԿ թիմն ամփոփելու է դիմումները մինչ 2025 թվականի հունիսի 12-ը եւ հետադարձ նամակով կապ է հաստատելու փորձագետների հետ 2025 թվականի հունիսի 13-ին.

- ☑ **ընտրությունը կատարվելու է փորձագետների ներկայացրած տվյալների եւ գնային առաջարկի հիմքով՝ դրանք համադրելով համագործակցության համար անհրաժեշտ պայմանների հետ,**
- ☒ **այն դիմումները, որոնք ներկայացվել են առանց դիմելու կարգի պահպանման, չեն դիտարկվելու:**